



ՍՐ. ՍԱՐԳԻՍ
ՎԱՅԱՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՆՅԵ

St. Sarkis
Armenian Church of D.F.W.

28 Յունիս, 1996

Գերաշնորհ

**S. Խաժակ Ա. Արք. Պարսամեան, Առաջնորդ
Առաջնորդութիւն Հայոց Ամերիկայի
Նիւ Ծորք**

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Բարի Վերադարձ: Աթլանթայի բոլոր կարգադրութիւնները եղած են: Պատարագը տեղի պիտի ունենայ երեքշաբթի, 16 Յուլիսի երեկոյեան ժամը 5:30-ին: Պատարագի աւարտին, եկեղեցիին մէջ, մարզիկներու օրհնութեան կարճ արարողութիւն մը եւ յետոյ ճաշկերոյթ եկեղեցւոյ սրահը: Ըստ մեզի տրուած տեղեկութեան ներկայ պիտի ըլլան նաեւ Հրանդ Բագրատեանը, եւ Բարգէն Արաքեանը: Այս մասին ստոյգ տեղեկութիւն պիտի ունենամ գալ շարաք:

Նամակ գրած եմ նաեւ Մեսրոպ Արք. Աշնեանին, հրաւիրելով զինք Պատարագին եւ ճաշկերոյթին: Ցարդ պատասխան չեմ ստացած: Աշխատանք կը տանիմ որպէսզի փոքրիկ դպրաց դաս մը եւ մի քանի Ա. Խորանի սպասարկողներ ունենանք:

Այս շարաքովերջ պիտի այցելեմ Սան Անթոնիոյի եւ Մէմֆիսի ծուխերը: Երկուշաբթի առաւօտ կը հեռաձայնեմ Ձեզի մանրամասնութեանց, այլ կարգադրութեանց եւ Ձեր թելադրութեանց համար:

Մատչելով ի համբոյր Ձեր սուրբ աջոյն,

մնամ յարգանքով

**Ներսէս Ա. Բեկ. Էկեղեցեան
Հովիւ**

Յ.Գ. կը յուսամ Թեմական Խորհուրդի ժողովին վերջնական որոշում կը կայանայ Mission Parish Project-ի կապակցութեամբ: